ԿԱՐԾԻՔ

Լուիզա Իվանի Մարաբյանի

«ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱԳՐԵՍԻԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԱՎԵՃԵՐՈՒՄ»

Ժ.02.07 – «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության մասին

Ներկայացված ատենախոսության նպատակը կին և տղամարդ քաղաքական գործիչների ելույթներում և հեռուստաբանավեճերում «ատելության խոսքի», կարծրատիպային պատկերացումների, լեզվական դրսևորումների առանձնահատկությունների և հաղորդակցական ռազմավարությունների ու մարտավարությունների գենդերային տարբերությունները բացահայտելն է: Քննության են առնված «խոսողի սեռի», խոսողի խոսքային գործունեության առանձնահատկությունները որոշակի խոսքային իրադրության մեջ: Նպատակը և առաջ քաշված խնդիրները, ինչպես նաև ուսումասիրության առարկան և օբյեկտն արժեքավոր են ժամանակակից լեզվաբանության ոլորտում առկա արդիական հարցերի բազմակողմ ուսումնասիրությունների տեսանկյունից:

Առաջ են քաշված հետազոտության վարկածի հետևյալ դրույթները.

- Կին քաղաքական գործիչներն իրենց քաղաքական ելույթներում նշանակալիորեն ավելի քիչ են խոսքային ագրեսիա դրսևորում, քան տղամարդ քաղաքական գործիչները:
- Կին քաղաքական գործիչների կողմից գործածվող խոսքային, ոչ խոսքային և հարախոսքային ագրեսիան էականորեն բացասաբար է ազդում գործչի հեղինակության վրա, մինչդեռ տղամարդ գործիչների դեպքում այն առավելապես չեզոք կամ դրական է ընկալվում:

Սույն ատենախոսության գիտական նորույթը ատենախոսը հիմնավորում է երեք գիտակարգերի՝ հանրամշակութաբանության, կառուցվածքային և գենդերային

լեզվաբանության շրջանակում խոսքային ագրեսիայի լեզվական միջոցների բազմակողմ ուսումնասիրության հանգամանքով: Ըստ հեղինակի՝ աշխատանքում առաջին անգամ է, որ ժամանակակից գենդերային լեզվաբանության տեսանկյունից նկարագրվում են «ագրեսիա» հուզավիճակի, «ատելության խոսքի» իրացման գենդերային տարբերությունները: Նորույթ է հետազոտության օբյեկտի ընտրությունը՝ գենդերային կարծրատիպերը քաղաքական հեռուստատեսային բանավեճի ժանրում, քանի որ վերջիններս դեռևս լեզվաբանական խորը և համակարգված քննության չեն ենթարկվել: Ատենախոսության նորույթներից է նաև այն, որ, նպատակ ունենալով պարզել քաղաքական հեռուստաբանավեճերում ագրեսիա դրսևորելիս կանանց և տղամարդկանց հուզազգացական վարքի գերակշռող հույզերը բառային և շարահյուսական մակարդակներում, աշխատանքում փորձ է արվել բացահայտել նաև խոսքի վրա սեռի հանրամշակութային հասկացույթի ազդեցության ընդհանուր օրինաչափությունները: Հետազոտության տեսական նշանակությունն ատենախոսը կապում է քաղաքական խոսույթում ագրեսիայի արտահայտչամիջոցների կիրառման գենդերային տարբերությունների հիմնախնդրի վերաբերյալ գիտելիքների խորացման, «խոսքային ագրեսիա» հասկացության բովանդակության ճշգրտման ու նշյալ հասկացությունը խոսքագործածության տեսության դիտանկյունից դիտարկումների հետ:

Հարկ է նշել, որ աշխատանքում ներկայացված փաստարկները, վերլուծությունը և ստացված տվյալները տալիս են բազմակողմ պատկերացումներ մարդկային ագրեսիայի երևույթի վերաբերյալ, ինչը արժեքավոր է նախանշելու ագրեսիայի կառուցողական կերպով «օգտագործելու» ուղիները: Ինպես նշում է հեղինակը, ժամանակակից հասարակությունում, չնայած ընդհանուր կայունության բավարար մակարդակին, գոյություն ունեն լարվածության և պոտենցիալ կոնֆլիկտի օջախներ և նման իրավիճակում մարդկանց՝ ագրեսիվ վարքագիծ դրսևորելու հավանականությունը մեծանում է, ինչը անբարենպաստ ընթացքի դեպքում կարող է վերաճել ապակառուցողական կոնֆլիկտների: Այս համատեքստում ագրեսիվության

հիմնախնդրի ուսումնասիրությունն անխոս ունի ոչ միայն գիտական, այլև գործնական նշանակություն: Եվ լեզվաբանական դրվածքով խնդրի ուսումնասիրությամբ ստացված արդյունքները կարող են նորովի հետաքրքրություն առաջ բերել ագրեսիայի այլ հարթություններում ուսումնասիրության խնդրի հանդեպ:

Մեր կածիքով՝ կատարված աշխատանքը արժեքավոր է լեզվաբանության, գենդերային տեսության, հաղորդակցության տեսության և նաև քաղաքագիտական դիսկուրսի ոլորտում հետագա ուսումնասիրությունների համար: Այս ուսումնասիրությունը կարող է առաջ քաշել հարցադրումներ ագրեսիայի հասկացության վերաբերյալ պատկերացումների ընդլայնման՝ մասնավորապես միջմշակութային համատեքստում գենդերային ագրեսիայի տեսության զարգացման համար:

Գործնական արժեքի տեսանկյունից պետք է նշել, որ քննարկված փաստական նյութը և արդյունքները կարող են կիրառվել անգլերենի՝ գործնական դասընթացներում, ճարտասանության, խոսույթի տեսության, գենդերային լեզվաբանության, հոգելեզվաբանության դասընթացներում:

Աշխատանքի բաժանումը գլուխների տրամաբանված է, քննարկված գիտական գրականությունը համապատասխանում է բարձրացված հարցերին: Լեզվական նյութի ընտրությունը, մեթոդները և վերլուծությունը համապատասխանում են առաջ քաշված խնդիրներին, իսկ մեթոդական գործիքակազմը բավական ընդգրկուն է և համապատասխանում է նպատակներին և դրված խնդիրների համակողմ ուսումնասիրությանը: Հեղինակը տիրապետում է մեթոդներին և կարող է դրանք ըստ նպատակի կիրառել: Օգտագործված գրականության ցանկում առկա են արժեքավոր և արդիական գիտական աղբյուրներ:

Աշխատանքն ընդհանուր առմամբ արդիական է և արժեքավոր, կարող է նպաստել գենդերային լեզվաբանության, քաղաքական դիսկուրսի և այլ հարակից գիտակարգերի ոլորտներում նոր հարցադրումների առաջ քաշմանը:

Դրական կարծիքով հանդերձ՝ կառանձնացնեինք հետևյալ դիտարկումները և հարցադրումները, որոնք բխում են հեղինակի կողմից բարձրացված հարցերի և ներկայացված պարզաբանումների վերաբերյալ մեր դիտարկումներից.

1. Աշխատանքում առաջ քաշված երկու վարկածների մասով՝ ցանկալի կլիներ որպեսզի առավել հստակ ներկայացված լինեին վարկածների առաջ քաշման նախադրյալները, առկա հետազոտություններն այդ ոլորտում և առավել հստակ ձևակերպված լիներ վարկածների գիտական արժևորումը:
2. Մեթոդական գործիքակազմը, ինչպես վերը նշվեց, տպավորիչ է և թիրախային, սակայն թվարկված մեթոդների շարքում հեղինակն առանձնացնում է «կատարված աշխատանքի արդյունքում ստացված արդյունքների և եզրակացությունների հավաստիությունը ստուգելու մեթոդը» (էջ 9), սակայն աշխատանքում այդ մեթոդի կիրառության առանձնացված դեպքերը հստակ չեն ներկայացվում: Նշվածը՝ որպես մեթոդ առանձնացնելու հարցը և նյութի քննության ընթացքում դրա կիրառման դեպքերն առավել հստակ ձևակերպման կարիք ունեն: Մեր տպավորությամբ, «կատարված աշխատանքի արդյունքում ստացված արդյունքների և եզրակացությունների հավաստիություն ստուգելը» տվյալ աշխատանքում առավելապես արդյունքների մշակման և վերլուծության հաջորդական քայլերից մեկն է, և այն որպես առաձին մեթոդ դիտարկելու անհրաժեշտություն չկա:
3. Ընտրված լեզվական նյութն ընդգրկուն է, և քննության համար ընտրված են տարբեր ժամանակաշրջաններից և տարբեր թեմաներին նվիրված հեռուստաբանավեճեր՝ ԱՄՆ, Ֆրանսիայի, Մոլդովայի նախագահական ընտրություններ, ՌԴ - Ուկրաինա հակամարտություն: Մեզ համար հասկանալի է ատենախոսության նպատակը և խնդիրները, սակայն

աշխատանքն առավել ամողջական տեսնելու տեսակետից ցանկալի կլիներ որպեսզի ատենախոսը հնարավորինս հիմնավորեր, թե ինչ սկզբունքով են ընտրվել թեմաները և ժամանակաշրջանները և թե որքանով են հենց ընտրված թեմաները և ժամանակաշրջանները նպաստել դրված խնդիրները լավագույնս ուսումնասիրելու համար: Արտալեզվական միջավայրի զուգահեռ ուսումնասիրությունը նույնպես կարող էր նպաստել առաջ քաշված լեզվաբանական խնդիրների առավել լայն դրվածքով քննություն իրականացնելուն:

4. Հեղինակն աշխատանքում անդրադառնում է այն հարցին, որ ագրեսիան, մասնավորապես կին քաղաքական գործիչների պարագայում, էականորեն բացասական է ազդում գործչի վարկանիշի վրա: Այս հարցի կապակցությամբ, աշխատանքում ցանկալի կլիներ տեսնել կոնկրետ հղումներ: Վարկանիշի վրա ազդեցության ցուցիչ օրինակ կարող են լինել հեռուսաբանավեճերի ընթացքում դիտողների արձագանքները և դրանց վերլուծությունը և ներառումը վերլուծական մասում կարող էր առավել ընդգրկուն պատկերացում տալ կին քաղաքական գործչի խոսքային ագրեսիայով պայմանավորված վարկանիշի ձևավորման հարցի վերաբերյալ:

Նշված դիտարկումները չեն ստվերում աշխատանքի գիտական որակն ու կարևորությունը, դրանք կատարված են աշխատանքն առավել շահեկան կողմից տեսնելու ցանկությամբ: Կատարված աշխատանքը, ինպես արդեն նշեցինք, արդիական է և արժեքավոր թե՛ տեսական և թե՛ գործնական տեսակետներից: Աշխատանքը պարունակում է որոշակի գիտական նորույթ և ստացված տվյալները կարող են կիրառվել այլ հետազոտություններում:

Կարելի է փաստել, որ դրված խնդիրները հեղինակն իրականացրել է բարեխղճորեն, ինքնուրույն՝ գիտական աշխատանքին ներկայացվող պահանջներին համահունչ:

Ատենախոսության սեղմագիրը և ներկայացված տպագիր հոդվածները համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:

Լուիզա Իվանի Մարաբյանի «Գենդերային ագրեսիան հեռուստաբանավեճերում» թեմայով ատենախոսությունն իր արդիականությամբ, ընդհանուր բովանդակությամբ, փաստական նյութի ընդգրկուն ծավալով, վերլուծական լուրջ աշխատանքով, արդյունքների հիմնավորվածությամբ և հետագա գործնական կիրառության հնարավորություններով համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ի 6-րդ և 7-րդ կետերին և թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:

Վերոնշյալը հնարավորություն է տալիս միջնորդելու ԵՊՀ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդին՝ Լուիզա Իվանի Մարաբյանին շնորհելու բանասիրական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանը՝ Ժ.02.07 ««Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտության գծով:

Պաշտոնական ընդդիմախոս՝

բ.գ.թ. դոցենտ

ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոն Մ. Ս. ՍԱՐԳՍԱՆ

25 հունիսի 2024թ.

Հաստատում եմ Մ. Սարգսյանի ստորագրության իսկությունը:

Երևանի պետական համալսարանի գիտքարտուղար

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

21.06.24թ.